

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 27

Գ. ՇՐՋԱՆ

6 ՅՈՒՆԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների օտերկան բաժանորդացիներն Կ. Պոլսոյ համար Բաւառացի զորքերուն համար Յիսուսի զորքերն իւրեքն: Արտասանման 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստանական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութեան լրկելուն: Բաժանորդագրութեանները կը սկսին առէն աւելոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ընէ շաբաթ առաւ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խմբին խմբացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աշխատեալ առարկութեանները նկատուրքեան չեն առնուիր:

2ի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏՐ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده « ماسيس » غزته مي اداره سنه

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE



ԱՊՐԱՆԻՆ ԿԱՌԱՐԱՆՈՒՄ
Յաճախորդաց ղրկուրքեան
համար

ՆԿԻՆՆԻՆԻ
ԵՐԵՎԱՆԻՆԻ
ԿՈՄԻՏԵ
Կ. ՊՈԼԻՍ, ՈՍԿԵՐԶԱԳ
ՇՈՒԿԱԿԱՆ ՎԱՆԱՈՒՍՏՈՒՆԵՐ ԹԻՆ 13



ՀԵՐԵՎԱՆԻ ՎԱՆԱՈՒՍՏՈՒՆԵՐ ՈՇՆԻ ԵՐՈՒՅԱԿԱՆ
ՃԱՅԿԱԿՈՎ ԿՐԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳՐԱՐԵՂԵՆԵՐ ,
ԱՄԵՆՔԻՆ ԱՂԱՏԱՐԿԱԿԱԿ ԸՂԵՂԻՆ ԿՐԱՏՐԱՍՏՈՒՄԸ
ՀԵՐԵՎԱՆԻ ՎԱՆԱՈՒՍՏԱՆ ԳՐԵՆԵՐՆԵՐՆԵՐ
ՀԵՐԵՎԱՆԻ ՎԱՆԱՈՒՍՏՈՒՆԵՐ ՈՇՆԻ ԱՐԺԱԹԵՂԵՆ
ԱՏԱՐԿԱՆԵՐ ,
ՀԵՐԵՎԱՆԻ ՎԱՆԱՈՒՍՏՈՒՆԵՐ ՈՇՆԻ ԺԱՄԱԳՈՅՈՅՆԵՐ
ԵՒ ԱՐԺԱԹԵՂԵՆ ԳՐԱՏՐԱՍՏՈՒՄԸ (ԿՐԱՏՐԱՍՏՈՒՄ) .

ԱՊՐԱՆԻՆ

ՀԱՐԻՐԻՆ ԲԱՆ ԿԱՆԻՔԻԿ , ՄԵՆԱԳԵՂԻՆ ԿԱՌԱՐԱՆ
ՈՒՄ ԶԱՐԱԹԻՎԿԱՆ ԲԱՐԻՐԻՆ ԲԵՐԶՈՎԻՔԱՐՈՒՄ .
ԿԱՆԻՔԻԿ ԳՆՈՂԻՆ ԿԱՌԱՐ 100ԻՆ 5 ԳԵՂԻ ,
ԳՈՐԺԱԺՈՒՄԸ ԳՐԱՐԵՂԵՆԵՐՆԵՐ՝ ԵՐԵՎԱՆԻՆԻ
ՈՒՄ ԿԱՌԱՐ 10 ԳԵՂԻՆ ԵՒ ԿԱՌԱՐ 10 ԳԵՂԻՆ .



ՋԵՆԵՐԱ, ՈՐԲԻՆԻՆ ԴՆԵՐԻ ՈՒ ՈՐԲԻ
ՎԻՐԱԳԱՄԱՅՆ ՄԵՐԵՆԱՆԵՐ
ԿՐ ԳՐԱՆԻՆԻ:

ԱՆԿԱՐԵՂԻ Ե ՈՐ ԸՆԴՈՒՆԻՔ ՄԵՐ ԱՌԱՆՑ ԿՐԻ
ՄԵՐԵՆԱՆԻՆ ԿԱՌԱՐ, ԲԱՅԵ ԷՄԻՆ ԿԵՄԵՆ Ե ԼԱՆ ՄԵՐԵՆ
ՆԱՅ ՄԵՐ ՈՇՆԵՆԱԿ, ՈՐՈՎԻՔԱՆԵՐ ԼԱՆ ՄԵՐԵՆԱՅ ՄԵՐ
ԱՆԹԻՎ ԵՒ ԱՆԿԱՌԱՐ ԺԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ԿՐ ՄԱՌՈՒ
ԳԱՆԵՆ, ՄԻՆԶԳԵՆ ԳԵՂ ՄԵՆԱԿԵՆ ՄԵՐ ԱՆԹԻՎ
ԴԺԳՈՒԹՅԱՆՑ ԵՒ ՄԱՂՈՒԼԻՆ ԱՂՐԻՐ ՄԵՆ ԵՒ
ԲՈՂՐ ԱՂԻՐԱՐ ԳԻՄԵՆ ԹԵ՛

ՄԻՆԿԵՐ

ՄԵՐԵՆԱՆ ԼԱՆԱԳՈՅՆԵՆ ԵՒ . ՈՂԵՆ ՄԵՐԵՆԱՆ ԱՄԵՆԻՆ
ԱՆԵՂԻ ԿՐԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԿԱՌԱՐԱՆԵՐ ԵՒ
ԳՐԱՐԱԳՈՐԺԱԺԻՆ ԸՂԵՂԻՆ՝ ԲՈՎԱՆԱԿԱՆ ԱՂԻՐԱՐ
ՄԵՂ՝ ԱՄԵՆ ՈՐ ՍԻՆԿԵՐԻՆ ՄԵՐԵՆԱՆԵՐ ԿՐ ԳՆԵ՛

ՄԻՆԿԵՐԻ ՄԵՐԵՆԱՆԵՐ ԿՐ ԺԱՐՈՒՆ ԿՐԱՄԱՅՆ ՍԻՆԿԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՈՒՄ
ՄԱՆԵՐ ԴԵՂ՝

ԲԵՐԱ, ՄԵՐ ԿՐԱՅԵՐ, ԿԱՐԱԹԱ ՄԵՐԱՅԻ ԼԻՆԵՐԻ ՂԻՄԱՅ .

- | | | |
|--------|---|---|
| ԿԱԼԱԹԱ | { | 1. ՍԻՆԿԵՐ ԼՈՒՄՆ , ԹԻՆԵՂԻՆ ԵՄԵՆԸ . |
| | | 2. ԳԱՐԱԲԵՅՈՂ , ԹՐԱՎԵՂԻՆ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԴԻՄԱՅ |
| ՊՈԼԻՍ | { | 1. ՍՈՒԹԱՆ ՀԱՄԱՄ . |
| | | 2. ՍՈՒԹԱՆ ՊԵՅԱՂԻՄ . |

ԴԱՄԵՐ ԵՒ ՆՈՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԴԵՐ .

ԿԱՏԱՐԵԱԿ ԵՐԱԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԿԻՐԵՐ ԳԱՆԱՈՒՄ ԲՈՂՐ ԲԱՂԱՄՆԵՐՈՒՆ ՄԵՂ

ՄԱՍՆԱԿԻՐԵՐ
ՄԱՍՆԱԿԻՐԵՐ
ՄԱՍՆԱԿԻՐԵՐ

ՄԱՍԻՆ

51րդ ՏԱՐԻ

— 6 ՅՈՒՆԻՍ 1902 —

ԹԻՒ 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ (Թարգմանչաց տօնին առթիւ) ՀԱՐՄԱՆ : — « Գլխակի յիշատակին .
Տ. Ա. : — Հարստական մը . ՄԷՐՍԷՏԷՍ : — Դրախտական . Սիպիի « Յոյերը » . ՅՈՎԱ. Գ. Ս. .
ՀԱՆՃԱՆ : — Մի՛ վառեք (Սիրերգ) . Վ. ՄԱԼԷՉԵՍ : — Ընթանական տառեր . Վճա.
րորդ . ԲՈՒ ՊՈՒԺԻ : — Հարստական քոնիկ . — Լուսնակին (Սիրերգ) . Վ. — Յուստիս :

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

(ԹԱՐԳՄԱՆՉԱՆ ԵՍՏՈՆԻՆ ԱՌԹՈՒՆ, ՀԻՆԳՇԱՌԹԻ, 4 ՅՈՒՆԻՍ)

Հայ Եկեղեցւոյ օրհներգու քնարը իր ա-
մենին զգայուն թելերը կը շարժէ , առոյգ
եւ ցնծուն ներդաշնակութիւններ ընծայելու
Թարգմանչաց յիշատակին , որուն երկներանգ
ճառագայթներուն բոլորը ա՛յնքան գեղեցկա-
պէս կը շողայ երկու շքեղ գէմքերու վրայ .
Ի՞նչ խորհրդաւոր , հմայիչ բան մը ունի
յիշատակին սակի թելը , որ անցեալին մէջ
երկարելով՝ անոր փայլուն գոհարներովը
կ'ընկուզէ ինքզինքը :

Մեր եկեղեցական յիշատակներուն ամէ-
նէն սրտազինը եւ կենդանին՝ Սահակայ եւ
Մեսրոպայ նախաձեռնութեամբ ծաղկած գրա-
կան գործունէութիւնն է : Տիրեցերական յաա-
կանի մը չունի անիկայ , այլ փոքրիկ ժողո-
վարդի մը հոգեւոր ու մտաւոր պէտքերուն
զոհացումն է : Աւետարանի իմաստութիւնը
կը բեղմնաւորէ զայն , որուն գրական հա-
մայիքը կրօնական ձուլուած մըն է :

Թարգմանչաց հոյը կեդրոնն է այդ հո-
գեւոր վերածնութեան , որ իր ազդեցութեան
լրջանակը կ'ընդլայնէ մեր Եկեղեցւոյ ամբողջ
ապրելութեանց մէջ . Դրական ոյժերու այ-
լազան քանակութիւն մը խտացած է հոն ,
բայց դարեւու փոշին ծածկած է անոնց դու-
ծը եւ աննշմար թողուցած անոնց ճշգրիտ
գիմազութիւնը :

Այդ գրական փունջին է՛ն շքեղ եւ անու-
շահառ ծաղկներն են Սահակ եւ Մեսրոպ ,
սիրակցորդ հոգիներ , հրաշալի միաքեր ,
խտակրօն կրօնաւորներ : Ո՛չ իր հայե-
ցողական զմայլումները , ո՛չ իր հոգեւոր
տենչերուն կրակները չկրցան պահել Հացե-
կացի վարդապետը իր մենաստի խցիկին մէջ ,
այլ հանձարին ուժգին սրացք՝ ժողովուրդին
հոգեւոր պէտքին ստիպողականութեամբ հետ ,
դուրս մղեց զայն իր մենաստանէն , դէպի իր
գործունէաց կեանքի կոչումները : Բայց հո-
գեկան ի՞նչ մեծութիւն , որ ժողովուրդին
բարոյական վատթարացումը եւ տգեղութիւն-
ները հակազդեցիկ ոյժով մը չընկրկեցին զայն
նորէն դէպի իր ճգնարանը , վասնզի հանձար-
ները չեն վախնար քառոններու վրայ նայելէ :

Աւետարանը հայացնելու պէտքը միակ
խթանն եղաւ այդ սաւառնումին , որուն
սիրալի ինքնութիւնն է մեր դասական գրակա-
նութիւնը : Սակայն մտաւորական այդ տեն-
դոս գործունէութիւնը վայրկեանական ոգեւո-
րութեան մը արդիւնքը չէ , այլ երեք չորս
դարերու ճիգերու կուտակում մը որ գերա-
զանցապէս կը ծաղկի Սահակայ եւ Մեսրոպայ
մէջ : Վասնզի բարձրագոյն կրօնք մը խորունկ
արմատներ ձգած է հոն , եւ առաջին առի-
թով , կատարելագործուած լեզուի մը կը

հանդիպինք, իր յստակութեամբն ու ճոխութեամբն նշանակելի : Այսու հանգերձ, Աստուածաշունչի թարգմանութիւնը, իսկապէս, քրիստոնէութեան արդիւնաւոր ներգործութեան պսակն եղաւ մեզի համար : Հայ Եկեղեցին արտաքին եւ հեռաւոր մարմին մը պիտի մնար, առանց ուղղակի շփուելու իր փոքրիկ իկանքին հետ, ցորչափ Աստուծոյ խօսքը խեղքեկ ասորբերէնի եւ փսածաղիկ յունարէնի անթափանցիկ ծածկաթովը հասնէր իրեն, եւ հայ հաւատաւորը անկարող ըլլար՝ առանց միջնորդի՝ արտայայտել իր հոգիին բխումները, իր սրտազեղումները՝ իրենց թարմութեամբը, ջերմութեամբը եւ ներշնչութեամբը : Ահա թէ ինչո՞ւ Գիրիմ գիրքը որ թէեւ մեզմէ աւելի օժտուած եւ քաղաքակրթուած աղգերու կեանքին մէջ մեծագոյն թուական մը չի ներկայացներ, սակայն կենսական պայման մը եղաւ մեր Եկեղեցւոյ ինքնակացութեան եւ մեր հոգեւոր զարգացման համար :

Ուրեմն, քրիստոնէութեան պարզեւն է մեր գրականութիւնը : Եւ կրօնական ներշնչումը այնքան հզօր, թափանցիկ ու շինիչ եղած է մեր ցեղին համար, որ լայնօրէն կրօնաւոր է մեր մտաւորականութիւնը : Այդ ծաւալուն, մտաւորական ոյժը կարծես թէ այլամիտօրէն իր մէջ ընկուզած է ամբողջ մարդը, ու ատոր համար, հայեցի գրական արժէքաւոր արտագրութիւններուն ատաղձը կրօնական է ընդհանրապէս :

Ինչո՞ւ տիրիլ թէ գրական ինքնատիպ նշխար մը չունինք յայտնապէս Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ընծայուած, թէպէտեւ իրենց աշխատութեան լատինը մեծագոյնն ըլլայ Ս. Գրոց թարգմանութեան մէջ : Միթէ իրենց ներշնչումներուն վայրկեական բերեղացումը անբաւական եւ աննշանակ պիտի չըլլա՞ր ցղացնելու իրենց անհուն եւ մաքուր հոգին որ զարիւր կը լեցնէ : Մեր եկեղեցականութեան ողին կազմող երկթերթի մատենաներն են անոնք. զոյգ հայելիները ուր կը ցոլանայ իտէալ կրօնաւորութիւնը :


Ո՞րքան ներշնչում, ո՞րքան հաւատք կը ծառագայթէ իրենց լուսաւոր դիմագիծերէն. ժամանակի անջրպետը գեղեցկացուցած է զանոնք :

Ի՞նչ պիտի ըլլայ մեր արտագին նուէր իրենց յիշատակին : Նրբակերտ արձաններու բարձրաքանդակները շատ անարժան եւ անմանափակ պաշտամունք մըն են իրենց յայտնաբերուած համար : Վասնզի ժամանակի ամենաժախ ժանիքը զիւրաւ մը պիտի փչրէր այդ ձիւնափայլ մարմարները : Անոնց արժանի յաշարձանը թող մեր գիտակցութիւնն ըլլայ որ այդպիսով կը խօսի մեր մէջ :

Արմաշ, 1 Յուլիս 1902

ՀԱՐՍՍԿ

«ԳԻՍԱԿ»Ի ՅԻԺԱՏԱԿԻՆ



Պատիկ ձերմակ մատուց մը, միջոցի տրեւով ողողուն եւ յորդելու աստիճան լեցուած յուզարկաւորներու բաղմունքով մը որ զուրա՞ր գերեզմանատան մարդերուն վայրէջումը հարկադրուած է մասամբ, կիսով մի մնալով անհետ կորուսուած ու արտուած լուր գէմքերով. երկուս խմբերը, «Հոգեւոր Երգարան»ներ բռնած, գլխահակ, մեղմաբան :

Ճակատը, խորանին տեղը, մարմարային ողորմ Յիսուսի, երկու քովը մէմէկ տառնակով, անզարդ, ապիտակ. ալ ու ձախ կողմերը՝ գրականներ, երէցներուն յատուկ Մէջտեղը, Պատուելի Պատիկներ — «Իստակ» — զաղաղը, մահաբեր մը վրայ, պատկերով ծածկուած :

Ասոր լուսնական մը մէջտեղ, Տոքթ. Պարմ կը ծանուցանէ թէ արարողութիւնը պիտի սկսի : Եւ ահա՛, անոյշ, ներդաշնակ մեղեդի մը կը բարձրանայ, երգեհոնի ընկերակցութեամբ, հեռուէն հասնող երգի մը արձագանգներուն պէս մեղմ, սիւզի մը պէս թեթեւ : Ինծի անծանօթ զգայնութեամբ մը կը համակուրիմ, — եւ թերեւս նոյն ապուրոյթիւնը կրեցին ամէն անոնք որ ատարանաբար անգամ ներկայ կը գտնուէին մեղեդական արարողութեան մը՝ Հայ Աւետարանական եկեղեցիի մէջ, — վարժուած ըլլալով դապարի մը առջեւ լսելու միշտ՝ քահանաներուն հոգեցունց «Դատեալ», Տէր, զայնտիկ մը որ դող կուտայ մարմինն եւ արցունք կը բերէ աչքերէն :

Ու ծաղկատու աղջիկները կ'երգէին , դաշն , մեղմօրօր :

Շուրջըս կենաց յուզեալ ծովուն
 Լացով իմ աչքըս կը նայի ,
 Բայց ինձ կուգայ մէկ ձայն սիրուն ,
 Եւ ան կըսէ «Եկո՛ւր ինձի» :

Կըսէ Թէ ո՛ւր նեղեալ հոգւոյս
 Հանգստութիւն կը գտնուի .
 Ո՛հ , երբ կըլլամ յոգնած , անյոյս ,
 Ի՛նչ քաղցր այն ձայն «Եկո՛ւր ինձի» :

Այս օրհներգն ալ իր տխրութիւնը ունէր , բայց սփոփիչ , կազդուրիչ տխրութիւն մը կարծես , — ելմէ կարելի է այսպէս բացատրել , — բաղդատելու համար մեր շարականներուն ընկճող տխրութեանը հետ :

Վերջին խաղերն հազիւ մտրած օգին մէջ , Տոբթ , կրին կը յառաջանայ դէպի զագաղը , ու կը պատմէ հանգուցեալին կեանքը , անոր նազեւոր հովուի գործունէութեանը վրայ ծանրանալով մասնաւորապէս , Ս. Գիրքէն հառաւորներ , աղօթքներ արտասանելով , վերմուտնդ , երկրկամ շէշտերով : Իրեն կը լսողէ Բրոֆ . Ճէճիգեան : Սովորական դամբանականներէն բոլորովին տարբեր՝ Բիւրակի խմբադասարանին խօսուածքը բունն ելեւէջներու շարք մըն է , մերթ գոռ ձայնով մը ու չքեղ նկարագրութիւններով վերացնելով զմեզ դէպի երկնային հորիզոնները , — ինքն ալ վերացած ու բազկատարած , — մերթ ինկնելով դէպի Պետիկեանի հիւանդութեան աստաղագին սնալը , իրական կեանքի պատկերով մը , ու կրկնելով անոր վերջին խօսքերը՝ օրհասականի մը նուազուն շէշտերը առած :

Յետոյ , մեր դէմ կը տեսնենք Բարգէն վարդապետը — «Պատուելիներու դամբանախօսք» պիւս — որ ուրիշ վարդապետի մը ու քահանայի մը հետ եկած էր Ս. Պատրիարք Հօր կողմէ , Հակիրճ՝ բայց լաւ մտածուած կերպով մը կը բացատրէ թէ կեանքի տեսողութեանէն աւելի՝ կեանքի լեզվամաւորութիւնը նշանակութիւն ունի մահուան առջեւ , եւ թէ հանգուցեալը , թէեւ 45 տարեկան , արդիւնաւոր կեանք մը ունեցած էր իրրեւ երէց եւ իրրեւ դրող : Բարգէն վարդապետ միակ առեւտրանք եղաւ , որ չի մոռցաւ յիշելու

«Գիտակ»ի գեղեցիկ յօդուածներուն շարքը ու անոր զրազէտի հանգամանքը :

Եւ արգարեւ , երբ այդ յօդուածները առաջին անգամ երեւցան Բիւզանդիոնի մէջ , ընդհանուր հետաքրքրութեան մը առարկայ դարձան . ո՞վ էր Գիտակը , եկեղեցական թէ աշխարհական . վասնզի , կրօնային շունչ մը կար իր «Մտածութիւններ»ուն մէջ , ու սէ՛ր ալ կար միանգամայն . Լամընէի ոճը ունէր շատ հեղ , ու երբեմն ալ աշխարհիկ գրողի մը ճկուն զրիչը : Երբ իմացուցաւ իր ինքնութիւնը , Պետիկեան՝ որ արդէն ծանօթ էր իբրեւ երէց , հանրածանօթ դարձաւ իրրեւ գրողէս , Շատերու հետ ես ալ փափագ ունեցայ զինքը ճանչնալու :

1901ի սկիզբները , ցուրտ ձմեռ օր մը , կ'աշխատէի Մատթէոսեան տպարանին մէջ , վառարանին քով , երբ յուշիկ քայլերով մէկը ներս մտաւ . առաքեալի դէմքով անձ մըն էր , ո՛չ ծեր ո՛չ երիտասարդ . մաւթ խառտեալ մօրուք մը , անխնամ թողուած , կը չրջանակէր դէմքը . մաղերը , նոյնպէս իրենց բնական վիճակին մէջ , մոխրագոյն դառնալու մօտ . երազոտ նայուածք մը ունէր ու շատ բարեհամբոյր խօսուածք մը , — մէկը այն արիւթներէն որոնք մըջլուսի մը վրայ կ'ոխելէ կը զգուշանան : «Գիտակ»ն էր , իր «Տօնական օրերու մտածութիւններ»ը թեւին տակ , տպագրութեան յանձնելու հաւատը մը կազմելու համար : Անուշով կը ճանչնայինք զիրար . առաջին տեսակցութեամբ բարեկամացանք : Եւ ամէն անգամ որ կուգար իր գիրքին վորձերը սրբադրելու , հաճոյքով կուսկընդրէի իրեն , կը խօսակցէի հետը՝ լրագրութեան վրայ , գրականութեան վրայ :

— «Թշկառիկներն ուղղուած բան մը գրած եմ , մանկութեան յիշատակ մը , Մասիւնին համար» ըսաւ անգամ մը , ու համեստօրէն յանձնեց ձեռագիրը :

Լաւ գրողները՝ խմբագիրներուն հանդէպ՝ սիրուն կիներու կը նմանին , որոնց շնորհալի մէկ ժպիտը , համակիր մէկ խօսքը յուսալ եւ սպասել կուտան ուրիշներ ալ : Իր աշխատակցութիւնը խնդրեցի , բայց ժամանակը կը պակսէր : Օր մըն ալ յանկարծ «Առողջ եւ

հիւանդ դրականութեան» վրայ գրչի վէճ մը ունեցայ իր հետ, լրագրական վէճ մը որ սակայն չխանգարեց մեր յարաբերութիւնները եւ որմէ ետքը նորէն իրարու ձեռք կը սեղմէինք առաջուան պէս սիրալիր կերպով : Այս պարագան կը յիշեմ մասնաւորապէս, իբրեւ հակապատկեր մը այն բարքերուն որոնցմով՝ կարծիքներու տարբերութիւն մը, թերթի մը յօդուածը՝ ուրիշ թերթի մը տեսութեան չի համապատասխանող շատ անգամ մեր մամուլին մէջ պայքարներ կը յարուցանեն որոնք ամէնէն սգեղ գոյները կառնեն, անձնականութեան տարուելով ու զլուանք ազդելով : Երբ քանի մը ամիս առաջ Պատուելի Ասատուրեանը մեռաւ, առաջին մատածուսօ Պատուելի Պետրկեանին վրայ սեւեռուեցաւ, որ պիտի կրնար անոր յիշատակին յօդուած մը նուիրել Մանյաի մէջ : Ահա՛ թէ ինչ պատասխանեց իմ դրուոր հրաւերիս :

Գում-Դարու, 30 Մարտ 1902

Գերագին բարեկամս

Ժամանակէ մը ի վեր ինֆլուէնցաէ կը նեղուիմ. չեմ գիտեր թէ ըմբռնալ պիտի թողնայե՞մ որ ներկայ գտնուիմ մեր յաւէտ ողբացեալ Պատուելիին ծաղման պաշտօնին : Խորապէս կը ցաւիմ որ կարող չեմ գոհացում տալ ձեր գերանգանցապէս ազնիւ փափախին՝ «Մասիս»ի միջոցով արժանաւոր մեծարանք մը ընծայելու համար հանդուցելոյն անմոռանալի յիշատակին : Գէթ թելադրուածեան մը համար արդեօք կը ներքէ՞ր որ համարձակիմ ըսել ձէ, եթէ վաղուան յուզարկաւորութեան հանդէսին ներկայ գտնուիք, որ տտեն կը յուսամ ձէ հանդուցեալ Պատուելիին ժամանակակից եւ աւելի մօտէն ծանօթ անձնաւորութիւններ պիտի խօսին գէթ անոր կեանքին գլխաւոր գծերուն վրայ, բաւական նիւթ պիտի ունենար զրելու ձեր յանկուցիչ, սիրուած ու սիրուն գրիչով, ու այս կերպով ուրիշ շատերու հետ զիս ալ զոհ եւ շնորհակալ պիտի ընէք :

Ընդունեցէք, կ'աղաչեմ, անկեղծ համակրանքս : Զեր կեանքին առողջութիւն եւ երկարութիւն մաղկելով,

Մնամ սիրալիր մեծարանք
միշտ ձերոյ

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

Խնդճ Գիսակ :

Կեանքի երկարութիւնը ու առողջութիւնը զոր կը մաղթէր ուրիշներուն, չի վայելեց ինքը. եւ գիպուածին կամ ճակատագրին դաւն մէկ քմահաճոյքովը, իր այս նամակը գրելէն երեք ամիս ետքը, նոյն այն դերեղ-

մանաւան մէջ, ուր երթալ կը յանձնարարէ ինծի՝ Ասատուրեան Պատուելիին յուզարկաւորութեանը ներկայ կը գտնուէի, իմ ցաւի ու յարգանքի բաժինս նուիրելու իր դագաղին :

Գերեզմանատան մէջ, Տօքթ. Պարնըմ եւ Տօքթ. Զէմպըր — երկուքն ալ շատ մաքուր հայերէնով մը — դամբանականներ արտասանեցին յաջորդաբար, փոսին եզրը կեցած, յիշատակներ քրքրելով Պատուելի Պետրկեանի կեանքէն, զործունէութիւնէն, հիւանդութեան օրերէն : Երգեհոնը, այնտեղ ալ, երգիչներուն ու երգչուհիներուն ձայնակցութեամբ, հնչեցուց արտառուչ օրհներգ մը որ իր խօսքերով ու եզանակներով այնքան լաւ կը պատշաճէր հանդիստ ընծայելու մեռնողին եւ օրօրելու անոր յաւիտենական քունը :

Տ. Ա.

ՄԻ՛ ՎԱՌԵՐ

(ՍԻՐԵՐԳ)

Խուցից լուսիւնը կը մութնայ կամաց-եւ մեր կրցկիւսուր խօսքերը, ափսոս, Մեռելներու ձայնն ունին, հին ու բայ : Մութին պէս՝ խոկանք խոնք ըսուեցանա :

Մի՛ վառեք լամբարն, եւ մութին մէջ լալ-թո՛ղ գիւեքն իր սեւ հոգին բերե հոս : Խորհի՛ց մանաւանդ. լոյսերը մարած, Փեղկերը գոց, եւ երկուքս ալ անխօս :

Երբ գերեզմանէն մինչեւ յաւիտեան, Աչիբեհն ներս ու հոգւոյն մեջ, մա՛ր եւ Երբ կընոջ կեանքին, նոյն իսկ մաղկութեամբ

էն մեծ խորհուրդներն, ու սերը, գրեթէ, կը սիրեն խաւարն . . . Ահ, բիծով լոյսե Մութը մ'արիւնցե՛ր. մութը իմ սիրս ե :

ՎԱՆԱՆ ՄԱԼԵԱՆ

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ՄԸ

Արեւմտեան Տիւմա եւ իր վեպերուն ընթերցումը.
— Ինչպէ՞ս գրուեցան «Բասմա սարի ետքը»
ու «Պրաժլոն դերակումաը» . — Բնագրա-
տիրուն եւ գնահատում . — Իզմիրի վի-
պական բարգմանութիւնները . —
Ծերեկոց եւ Մամուրեան . —
Մամուրեանի Տիւմաի
կեանքէն:

Ֆրանսայի գաւառական քաղաքներէն մէկը,
Վիլլէ-Քոթէն այս օրերս առնեց իր ամէնէն
եղանակէր գաւառներէն մէկուն , Աղեքսանդր
Տիւմա Հօր հարիւրամեակը : Տիւմա այդ քա-
ղաքը ծնած է 1802 յուլիս 24ին , համեստ
բայց վայելուչ տան մը մէջ՝ զոր անովթար կը
պահեն տակաւին , եւ որուն մօտիկը կը բարձ-
րաւայ իր հսկայ արձանը : Սիրուն եւ հաճո-
յալի քաղաք մըն է ասիկա , ուր Տիւմա բա-
ւական մաս մը անցուցած է իր կեանքէն ,
եւ զոր այնքան գեղեցկօրէն ու գուրգուրան-
քով նկարագրած է իր «Անժ Բիթու»ին մէջ :

Չեմ գիտեր թէ Տիւմա հօր անունը բան
մը կը յիշեցնէ՞՞ ձեզի , բայց գոնէ վստահ եմ
թէ ձեզմէ անոնք որոնք աստիճան առիթը ու-
նեցած են անոր գործերէն մէկը կարդալու ,
չա՛տ հաճելի վերջուշում մը պիտի ունենան
այս տեղեկութիւնը կարդալով : Որովհետեւ
Տիւմա հայր որչա՛փ ալ արուեստի տեսակէ-
տով երկրորդական , գրեթէ անարժէք գրող
մը եղած է , զբօսցուցիչ վիպասանի հանդա-
մանքով միշտ առաջին կարգին վրայ պիտի
մնայ , ու պիտի կրնայ իր արհամարհան ժպի-
տը վրայ պահել բոլոր անոնց վրայ՝ որոնք
իրմէ վերջ գրականութեան այդ սեռը մշա-
կած են ու կը մշակեն տակաւին :

Իմ մասին , շատ բան կը յիշեցնէ ինծի
այդ անունը : Կը յիշեցնէ օրինակի համար
աղայութեան օրերս , ուր հազար զոհողու-
թիւններով հաւաքուած պուա մը դրամ գըր-
դանիս մէջ , Պոլիս կ'անցնէի , գրավաճառէ
գրավաճառ դեղերելու մտադրութեամբ , եւ
երկուսն զէմ , հատոր մը կամ երկուք ձեռ-
քիս մէջ՝ տուն կ'աճապարէի փութով , վայր-
կեան մը առաջ անոնց մէջ թաղուելու հա-

մար : Եթէ հատորը Տիւմայէն ըլլար , ա՛լ ան
գիշերը ո՛չ կերակուրը ուշքիս կ'երեւար , ո՛չ
ալ անկողինը : Անպատճառ գիրքը վերջանա-
լու էր՝ որպէս զի հանգիստի , քունի վրայ
մտածելու մղուէի : Գիշերներ եղած են ուր
լամբարին քարիւղը հասցնելէ վերջ մօմի կտո-
րով մը շարունակած եմ ընթերցումը , եւ գի-
շերներ ալ՝ որոնց միջոցին չեմ կրցած տոկալ
մտքի այդքան յոգնութեան , ու պատուհա-
նին առաջը , եւ կամ սրահին մէկ անկիւնը
գիրքը ձեռքս քունս տարած է աթոռի մը վրայ :

Այս անձնական մանրամասնութիւնները
դիտմամբ կը յիշատակեմ հոս , որովհետեւ
գիտեմ թէ Տիւման կարգացող տղոց մեծա-
գոյն մասին ճիշդ միեւնոյն բանը պատահած
է : Եւ ո՞վ արդէն զոր օրինակ «Երեք հրա-
ցանակիրներ»ը կարդալ սկսելէ վերջ գիրքին
ո՞ր եւ է մէկ տեղը պիտի ուզէր կամ պիտի
կրնար ընթերցումը դադարեցնել : Զանձայթ ,
թուրքերէն տուող էջ մը չկայ այդ հատոր-
ներու բովանդակ շարքին մէջ . դարձող ա-
մէն մէկ էջը նոր կնճիռի մը , նոր արկածի
մը նկարագրութիւնը կը սկսի , յաջորդական
գլուխներէն իւրաքանչիւրը մէկ նոր շահա-
տակութիւնը կը պատմէ գիրքին չորս գլխա-
ւոր հերոսներուն , եւ այդպէս , սողէ սող ,
հետաքրքրութիւնը կը օրուի , շահագրգռու-
թիւնը կ'աւելնայ : Ու գիրքը վերջանալուն
ընթերցողը ցաւագին աղապատանքով մը կը
գիտէ «Վերջ» բառը , մտածելով թէ որչա՛փ
աւելի լաւ պիտի ըլլար եթէ պատմութիւնը
քանի մը հատոր ալ ունենար տակաւին : Զէ՞
մի որ արդէն «Երեք հրացանակիրներ»ուն
շարունակութիւնը եղող ուրիշ երկու գործեր ,
«Բասմա տարի ետք»ն ու «Պրաժլոն դերակումա»ը
ընթերցողներու այդ անխուսափելի փափա-
քին ծնունդն են : Պատմութիւնը թերեւս
ծանօթ է ձեզի , Երբոր «Երեք հրացանակիր-
ներ»ը կը սկսին հրատարակուիլ , ահագին
սպեւորութիւն մը կը գոյնացայ անոր չորս հե-
րոսներուն , Աթուի , Բորթուի , Արամիսի եւ
տ'Արթանեանի շուրջը : Ամէն կողմէ , եւ ամէն
դասակարգի պատկանող ընթերցողներ նամակ
նամակի վրայ կը գրեն Տիւմայի , խնդրելով
որ իր հերոսները չմոռցնէ , եւ նոր գործի մը
մէջ կրկին երեւան բերէ զանոնք , եւ անոնց

հետ ալ անշուշտ նոր արկածներ ։ Տիւմա չի կոտրեր իր ընթերցողներուն սիրտը , ու կը գրէ վեց նոր հատորներ՝ «Քսան ամբի հաք» խորագրով ։ Հատորները ձեռքէ ձեռք կը խըլ- ուին , եւ շատ աւելի մեծ ընդունելութիւն մը կը գտնեն ։ Տիւմա կը կարծէ թէ գոհացու- ցած է իր ընթերցողները , եւ կը սկսի նոր գործի մը պատրաստութեան , բայց կրկին հանգիստ չեն թողուր զինքը ։ Ընթերցողները նորէն նամակ նամակի վրայ կը գրեն , վէպին շարունակուիլը խնդրելով , եւ ա՛յն ստաիճան տարածուն հանգամանք մը կը ստանայ այս խնդրանքը որ հսկայ պատմիչը տասերկու հա- տորներու նոր շարք մը կը գրէ «Պրաժլօն դերկոմս» վերնագրով , շարք մը որ միշտ գե- դեցիկ ընդունելութիւն մը կը գտնէ՝ հակառակ միւսներէն զգալապէս ակար բլլալուն , եւ որուն մէջ վերջապէս իր չորս հերոսները՝ մէյ մէկ կերպով կը մեռնին՝ աւելի կամ նուազ ցալտուն շահատակութեանց կատարման մի- ջոցին ։

✱

✱

Քննադատները որոնք արուեստի տեսա-
կէսէն ոչնչացուցած են Տիւմա հայրը, արեւք
սակայն չեն կրցած ուրանալ անոր ստեղծիչ
հանձարը, ո՛չ ալ այն օգուտը զոր ունեցած
է իր անհատնում երկասիրութիւններով, ու-
րոնց թիւը երկու հարիւրը թաւական մը
կ'անցնի։ Յրանսական ժողովուրդին մէջ
տոհմիկ պատմութեան սիրուելուն ու տա-
րածուելուն մեծապէս նպաստած են այդ վէ-
պերը, որովհետեւ ամբողջ սերունդ մը անոնց-
մով անցուցած է իր պատանեկութեան շըր-
ջանը, որովհետեւ ամբողջ սերունդ մը այդ
վէպերուն մէջ նկարագրուած քաջագործու-
թիւններով խմորուած է։ Եւ կարգացողները
զիսեն թէ ինչ գերող, ինչ հրաշալի ու
հրդեհող տաղանդով մը եղած են այդ նկա-
րագրութիւնները։ Սեռը, — պատմական-
վէպի այդ սեռը, — իրաւ է որ մշակուած էր
իրմէ առաջ, բայց ոչ ոք, նոյն իսկ Ուոլթըր
Սքօթ չեն կրցած իրեն չափ հրապուրիչ դար-
ձնել զայն։ Բարձրութիւն, ուսումնասիրու-
թիւն, գիտողութեան ու նկարագրութեան
ճշդութիւն չէ՛ որ փորձած է ապր այդ սեռին

այլ ամբողջ գիւցաղներգութիւններ հիւսած է երբեմն անգոյ , եւ երբեմն ալ անկարելի դէպքերով ու դէմքերով : Վկայ ա'Արթանեայ Բաղարար որ գոյութիւն ունեցած է պատմութեան մէջ , եւ որուն իրականն ու վիզային իրաւոյն անհամեմատ կը տարբերին , յորդ շիւղէ մը ամբողջ յարգանոց մը շինած է Տիւմա , եւ նոյն իսկ չափազանցութիւն չպիտի ըլլար ըսել թէ ջուր կաթիլէ մը կատարել ծովեր կրցած է գոյացնել : Վկայ նաեւ իր «Զամբորդութիւններ»ը , որոնցմէ մեծ ազդեմաւոր . . . սեռեակին մէջ կատարած է , եւ որոնք սակայն չաա ետ ձգած են նոյն իսկ այլ երկիրներուն մէջ իրապէս ճամբորդած մարդոց նկարագրութիւններ :

Աստիկա իր աաղանդին զորութիւնն է յառակութիւն մը զոր քիչեր ունեցած են , եւ որուն մէկ շատ անկեալ տեսակը կարելի է գտնել այսօրուան թերթի—վրայագիրներու , զոր օրինակ Մօնթէմէնի մը եւ կամ Էմիլ Ռիշպուռի մը գործերուն մէջ , Իսկ ինչ իր աաղանդին գեղեցիկ կողմն է ու պիտի մնայ , այն գերադանցապէս զրօսցացիլ ոգին է որ կը թեւածի իր բոլոր երկասիրութեան մէջ անխտիր : Սկսեալ իր պարզ ու պատուա- կան վէպերէն , առամներէն ու թատերացու- թիւններէն մինչեւ ճամբորդութիւններն ու յիշատակները , չունի հատոր մը որ համը- ընթերցում մը չառթէ որչա՛փ զարդացու- ղութիւն ունենայ , այնչա՛փ մըն ալ ամէնէն գե- ղապաշառ եւ արուեստի սիրահար հոգիին : Տղան , պատանին , ծերը , հիւանդն ու առողջը , վերջապէս ամէն մարդ իրենց մասնա- լոր տկարութիւնը ունեցած են այդ իրքե- րուն համար , որոնք տակաւին մինչեւ այսօ- րեաւեան նշանակելի առեւտուրի մը աա- րկայ կը դառնան : « Տիւմայէն գիրք մը , — քսած է կին հրապարակագիր մը , — բարեկամն է՝ որուն կը թոյլատրեն միտ- մանել հիւանդներու , մահուան ճիւղաներէն իլուածներու սենեակը , Ուժաբեկ ձեռքեր առանց յողնութեան կը վերցնեն արգանքներու այդ հատորը , զարկահար ճակատները ամէն տկարութիւն մը զգալու կը խոնարհին անկէ , ծորող մաածման վրայ որ կը շաղկարտէ , կը սուրայ , կը ժպտի : Հակիկիթ մը , թրիք

մը եւ «Երեք հրացանակիրներ»ը տունէ մը ներս, եւ տնա մահը կը փախի անկէ, ու կեանքը կը մահէ անոր տեղ» : Կարելի չպիտի ըլլար Տիւմայի գործը յատկանշող լաւագոյն բացատրութիւն մը գտնել :

* * *

Եթէ այսչափ երկարօրէն կը ծանրանամ այս հարկբաժնակիրն վրայ, պատճառը սա է որ Տիւմայ անժանօթ մը չէ մեր մէջ : Իր զըլ-խաւոր վէպերը, ինչպէս «Երեք հրացանակիր-ներ»ը, «Քսան տարի ետք»ը, «Պրաժլօն դեր-կոմ»ը, «Մօնթէ Բրիսթօ»ն, «Թադուհույն Մանեակը» «Տիկին Մօնսորօ»ն, «Ժօզէֆ Պալամօ»ն, եւ ուրիշներ՝ զորս չեմ յիշեր այս պահուս, թարգմանուած են մասնաւո-րաբար Իզմիրի երգեմանի գրական զարթնումին տանէ, զաթնում մը՝ որ թէեւ ինքնատիպ ու ցեղին յատուկ գործերով չէ՝ որ կը յառ-կանայ, բայց որ վերջապէս անագին օգուտ մը ունեցած է մեր գրականութեան, ու մա-նաւոր աշխարհագրորդի տարածման : Եւ այդ թարգմանութիւններէն ստուարագոյն մասը պատած է այսօր, հակառակ անոնցմէ իւրա-քանիւր օրինակին միջին հաշուով հարիւր հոգի մը ձեռքէ անցած ըլլալուն : Միւս կողմէ, Տիւմայի գործերէն գոնէ մէկը կրցած է մեր մէջ կատարեալ ժողովրդականութիւն մը լսել, բան մը՝ զոր չառ քիչ գիրքեր մըսն ինչպէս «Հազար ու մէկ գիշերներ»ը, Էմիլ Սիւի «Գաղտնիք Բարիզի»ն, «Կիւլի-վեր ճախորդութիւնները», եւ մասամբ ալ Դիւլի «Թշուառներ»ը կրցած են ձեռք բե-րել : Տիւմայի այդ գործը «Մօնթէ-Բրիսթօ»ն է, վէպ մը՝ որուն այլեւայլ դրուագները ա-ւելի կամ նուազ յատկանշանական յաւելում-ներով կամ յապաւումներով տակաւին մինչեւ այսօր կը պատաքին Պոլսոյ ռամիկներու բեր-նին մէջ, ճիշդ ժողովրդային հէքեաթներու եւ աւանդութեանց պէս : Ասիկա ապացոյց մը է՝ այն ահագին ընդունելութեան որուն այդ վէպը կազմող վեց հատորները կրնան առար-կայ գարձած ըլլալ մեր մէջ, իրենց հրատարա-կութեան միջոցին :

Յիշատակելիք ուրիշ պարագայ մըն ալ այն ազդեցութիւնն է՝ որուն ենթարկուած են

մեր անցեալ սերունդին պատկանող քանի մը գրողներ՝ ուղղակի Տիւմայի վէպերէն : Ասիկա թերեւս անըմբռնելի երեւոյ մեր գրականու-թեամբ հետաքրքրուողներուն, եւ նոյն իսկ կրնայ ըլլալ որ բոլորովին paradoxal հանգա-մանք մը տան դիտողութեան մը՝ զոր չեմ ուզեր ինծի պահել. — Ծերենցի բովանդակ գործը մեծ մասամբ նոյն տոնները կատար-ուած Տիւմայի թարգմանութիւններէն ներ-չնչուած է, եւ քիչ մըն ալ Ուոլթր Սքօթի «Այվընհու»էն (սխալ ընթերցմամբ մը «Իվա-նօէ» գրուած) : Բայց ինչ որ ալ ենթադրեն եւ ըսեն, բնաւ չպիտի ուզեմ սխալ դաւանիլ այս զիտողութիւնը որ բուն իսկ իրականու-թիւնն է ինքնին : Միեւնոյն բանը նաեւ Մա-մուրեանի կիսատ մնացած ծանօթ մէկ վէպին համար, — հայճեալ, անկատար, արուեստէ բոլորովին զուրկ գործ մը որ ամէն կերպով անարժան է իր ուժեղ ու հոյակապ տաղան-դին, եւ զոր չեմ գիտեր թէ ինչո՞ւ իր գլուխ-գործօցը դաւանելու սխալը ըրած են ու կ'ը-նեն : Տարբերութիւնը սա է միայն որ Մա-մուրեանի գործին մէջ Տիւմայի ընթերցում-ներուն ազդեցութիւնը մասամբ չէզոքացած է «Այվընհու»ի աւելի կորովի ազդեցութեամբ : Եւ ասոր պատճառն ալ սա է որ Մամուրեան միեւնոյն ատեն թէ՛ իր վէպը գրած եւ թէ «Այվընհու»ն թարգմանած է : Անոնք որ այս մասին աւելի հետաքրքիր են, կրնան բազ-դառել Մամուրեանի գործին մէջ ներկայաց-ուած վանականի տիպարը՝ «Այվընհու»ի մէկ հերոսին հետ՝ որուն անունը միտքս չիցնար, եւ որ վանական մըն է իր կարգին : Ամէն բան նոյնն է, խօսելու, դործելու կերպերը, դերը, ընդունելութեան եղանակը, շտապե-րութիւնը, եւայլն :

* * *

Տիւմայի հարկբաժնակիրն նկարագրու-թիւնը աւելորդ կը նկատեմ հոս, քանի որ օրաթերթերը աւելի կամ նուազ մանրամաս-նութեամբ արձագանգ եղան անոր : Բայց չվերջացուցած կ'ուզեմ քիչ մը ծանրանալ իր կեանքին վրայ, կեանք մը որ լեցուն է ման-րավէպերով, եւ որոնցմէ մէկ քանին, —

գոնէ ամէնէն յատկանշականները, — կ'արժէ յիշատակել այս առթիւ :

Աղեքսանդր Տիւմա զօրավարի մը զաւակն էր, — պարագայ մը որ առանձին գեր մը ունեցած է իր ապագայ նախասիրութեան, այսինքն պատմական վէպի տեսակէտով, — եւ նիւթական մեծ կարողութեան մը տէր չէ՛ գտած ինքզինքը՝ հօրմէն որը մնացած միջոցին : Համեստ սկզբնաւորութիւն մը ունեցած է Բարիգի մէջ, ուր գացած էր գործ մը խնդրելու հօրը բարեկամներէն՝ Սեպասթիւանի, Ժուռտան եւ Փռւա զօրավարներէն, ստացած ուսում մը՝ որ բոլորովին անբաւական էր Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ յաջողելու համար :

— Մաթեմատիք գիտե՛ս, կը հարցնեն իրեն զօրավարները :

— Նրկար ասէն կայ որ սրբողած եմ չորս գործողութեանց հետ, կը պատասխանէ Տիւմա անհոգութեամբ :

Եւ այդպէս, բոլոր հարցումներն ալ գահացուցիչ պատասխան մը չեն ստանար : Բան մը չեմ գիտեր, կ'ըսէ Տիւմա, առանց հոգ ընելու որ զօրավարները կը յուսահատին : Ի վերջոյ անոնցմէ մէկը կը փափաքի տեսնել իր գիրը, եւ Տիւմա ալ գեղեցիկ գիր մը ունենալով կը փարատէ անոնց յուսահատութիւնը : Այդ գիրին շնորհիւ, մարդիկը կը յաջողին զինքը քարտուղար կարգել Օրլէանի դռքին, որուն քով կը գրէ իր առաջին վէպերը : Անկէ անդին, կեանքը իրեն համար յաջողութեանց շարք մըն է, եւ գեղեցիկ ալ յաջողութեանց շարք մը : Ժողովրդականութիւն մը եւ ընդունելութիւն մը՝ որոնց քիչ գրողներ բաղըր կ'ունենան առարկայ դառնալու, նոյն իսկ առաջին նախափորձերէն կը շրջապատեն իր գործերը, տարիներու ընթացքին մէջ զինքը յաջողութենէ յաջողութիւն առաջնորդելով : Քիչ առ քիչ հարստութիւնն ալ չուշանար, եւ Տիւմա կը սկսի միլիոններու հետ խաղալ : Ֆրանսական բոլոր գլխաւոր օրաթերթերը ձեռքէ ձեռք կը յափշտակեն իր վէպերը՝ որովհետեւ Ժողովուրդը աննկատօրէն եւ առանց հաշուի կը գնէ բոլոր այն թերթերը՝ որոնք Տիւմա հօր ստորագրութիւնը կրող թերթօն մը կը հրա-

տարակեն : Դրամը սակայն ձեռքէն կը ազնայնա՛փ հեշտիւ՝ որչափ թերեւս չէր կրնայ շահիլ, ու շարունակ, հակառակ լրացած պետներէ ու հրատարակիչներէ անպին դուրսներ ստանալուն, միշտ պարտքի տակ կը մնայ : Լաֆն ու բազմածախս կեանք մը կը սկսի վարել, կեանք մը որ իր բովանդակաստակը կը կլլէ, ու կրկին առիթը ներկայացածին պէս չի վարանիր քսակին բերանը կարելի եղածին չափ բանալու՝ ո՛ր եւ է քան զգործութեան մը համար : «Բարի հիանալու ունեւանած են զինքը, եւ շատ իրաւացիօրէն իր վրայ պատմուած մանրամասնութիւնն ստուար մաս մը այդ տեսակէտը կը գրկին, եւ կան անոնց մէջ՝ որոնք ցոյց կու տան թէ Տիւմա թշուառութեան մը կամ ձախորդութեան մը հանգէպ մինչեւ անգամ չէ վարանած օրում կերակուրին զրամը խնայելու : Իր համարին ամէնէն գեղեցիկ կողմերէն մէկն է ասիլա, բան մը որ բազմօրէն կրկնուած ըլլալով քրտ պէտք չունի անգամ մըն ալ ապացուցուելու :

Բարի, անհոգ ու գերազանցապէս զուարթ, տեսակ մը վառվռուն ու մշտապէս երիտասարդ կեանք մը անցուցած է միշտ, կատարեալ երջանկութիւն մը դառնալով բոլոր անոնց համար գորս իրեն բարեկամ ընտրած էր, եւ որոնք բազմաթիւ ալ էին : Բան մը չէր խնայիր, բանի մը առջեւ չէր ընկիւն տնոնց հաճելի ըլլալու համար, եւ կը գտնուէին առիթներ՝ որոնց միջոցին նոյն իսկ խոհարարութիւնը յանձն կ'առնէր հաճող մը աւելի պատճառած ըլլալու մտքով : Տակաւին մինչեւ այսօր՝ գովեստով կը յիշատակեն իր օմնէք շինելու կարողութիւնը ու կը նկատու գրեն թէ ինչպէ՛ս բարեկամներ հիւր ունեցած միջոցին թեւերը սոթաւելով հաւկիթին կողովէ ձեռքը կ'առնէր, եւ տապակին առջեւ անցնելով մասնաւոր գուրգուրանքով, նոյնիսկ կուրելի է ըսել՝ մասնաւոր արուեստով մը կը պատրաստէր այդ համեղ ու թիթեւ կիտուրը : Խոհարարութեան հետ տակաւին շատ մը գործերու ձեռք զարկած, շատ մը փափաքներ ունեցած ու գահացուցած է : Զգի նորութիւնն ու որսորդութիւնը օրինակի նման մար՝ որոնց կատաղի սիրահար մը եղած է, եւ շատ մըն ալ արկածներ անցուցած անոնք

պատճառաւ : Ատեն մըն ալ ուզած է քաղաքական ասպարէզը մանել , եւ իբր երեսփոխանական ընտրելի ներկայացած է Պուրկոնեի մէջ , իրաւ է որ չէ յաջողած , բայց վերջապէս այդ ընտրութեան կապուած է իր կեանքին առէնէն շահեկան մանրամասնութիւն մէկը , որ գոնէ մեր մէջ անտիպ ըլլալուն համար կրնայ արժանի նկատուիլ յիշատակութեան :

Տիւմա շատ պզտիկ ու բարեհաւ ռաքեր ունենալով , մասնաւոր խնամք մը կը տանէր իր կօչիկներուն , շուքրին կօչիկներ ընդհանրապէս , որոնց վրայ կը գուրգուրար , եւ որոնք իրենց առանձին զերը խաղացած են իր կեանքին մէջ : Այդ երեսփոխանական ընտրութեան առթիւ , Տիւմա՝ Պուրկոնեի կ'ընթաց իր մէկ բարեկամին հետ , ընտրողներուն ներկայանալու : Բարեկամն ու ինքը կը պատուքին թաղէ թաղ , գիւղէ գիւղ , ընտրողները գրաւելու մտքով , եւ անպիտան մտայ կը կտրեն միակ օրուան մը մէջ : Վերադարձին սակայն Տիւմա յուսահատութեամբ կը տեսնէ որ իր նուրբ ու փափուկ կօչիկները պատառ պատառ եղած են , այդչափ յոգնութեան չկարենալով դիմանալ : Ինչ ընել Յաջորդ օրը վճռական գումարում մը պիտի ըլլայ , որուն մէջ անհրաժեշտ է որ խօսի ընտրողներուն , ինչպէ՞ս ներկայանայ այդ կօչիկներով : Բաղդը սակայն կը ժպտի նորէն , որովհետեւ բարեկամը բաւական փութաութեամբ վերջ կը յաջողի քիչ շատ շտապով ու ներկայանալի կօչիկ մը ճարել : Այդ կօչիկները սակայն պատճառ կ'ըլլան որ շուրջ ինչայ իր ընտրութիւնը : Ու տեսնէք ինչպէս : Միւս օրը , Տիւմա հազուած սրգում կը ներկայանայ ընտրողներուն եւ կ'արտասանէ բանախօսութիւն մը՝ որ շատ մեծ ընդունելութեան մը կ'արժանանայ : Բայց մրցակիցը , խորամանկ մարդ մը , ու քաղքին ալ բնիկ , յանկարծական զրդումէ մը մղուած ըմ կ'ըլլէ , եւ վիպասանին փայլուն ու չփոք կօչիկները ցոյց տալով՝ Ազեքսանդր Տիւման կ'ընդհանրացնէ իբրեւ նիւթական շատ մօտ վիճակի տէր մէկը , որ պէտք չէ ընտրուի իբր ներկայացուցիչ՝ այդ չըջանակի համայնքին : Այս յայտարարութիւնը շատ բանաւոր կ'ըրեալ Պուրկոնեիցի միամիտ

ընտրողներուն՝ որոնք իրենց փայտէ կոշտ սանդղակներուն եւ Տիւմայի աղուոր կօչիկներուն վրայ անարկ մը նետելէ վերջ իսկոյն համոզուելով , քուէնին կուտան խնդճ վիպասանին մրցակցին : Եւ զուք ա'լ կրնաք գուշակել թէ Տիւմա ինչ քիթ բերան կ'ընէ այդ կօչիկի արկածին համար , որուն անշուշտ բնաւ չէր սպասեր :

Տիւմա հարուստ չէ մեռած , հակառակ անպիտան գումարներ չահած ըլլալուն : Ըսի արդէն թէ ինչ առատութեամբ կը մօխէր չահածը , որ յաճախ քիչ կու գար նոյնիսկ իր պարտքերը գոցելու : Կատարեալ պօնեմ մը , եթէ կ'ուզէք , բան մը՝ որուն սքանչելի մէկ ապացոյցը կրնայ նկատուիլ հետեւեալ վերջին մանրամասնութիւնը : Մահուրէնէն քանի մը օր առաջ Տիւմա ցոյց կու տայ իր գաւկին՝ Ազեքսանդր Տիւմա Որդիին՝ դարակի մը մէջ գանուած 100 ֆրանքի գումար մը , ու կ'ըսէ ժպտելով .

— Երբոր առաջին անգամ Բարիդ եկայ , գրպանս 53 ֆրանք ունէի . այդ դարակին մէջ ճիշդ հարիւր ֆրանք կայ , ինչ որ կը նշանակէ թէ կրկնապատկեր եմ դրամագլուխս : Ու տակաւին կ'ըսեն կ'ըսեն թէ մեծ մխոթ մըն եմ ես , եւ թէ առած դրամս չեմ գիտեր թէ ո'ւր կ'երթայ :

Իր ստրագայման զուարթութիւնը չէր չիջած նոյն իսկ մահուան անկողինին մէջ , ու մինչեւ անգամ կ'ըսեն թէ վերջին շունչը ժպտի մը մէջ տուած է :

ՄԷՐՍԵՏԷՍ

Մեր աշխատակից Տոք. Յովսէփ Տէր-Ասեփանեանէ ստացած ենք յոյժ շահեկան ու գեղեցիկ յօդուած մը , վեր. Ա. Կ. Պետիկեանի նուիրում , անձնական տպագրութիւններով , լիւսակներով , մանրադիպերով խառն , զոր պիտի հրատարակենք Մասիսի յաջորդ քիւով :

Նոյնպէս յաջորդ քիւեն պիտի շարունակենք Տ. Տոք. Եպիսկ. Պաւլեանի «Ժողովրդական առաքելներ»-ը որոնց առաջին մասը երեւցաւ Մասիսի 24րդ քիւին մէջ , եւ որուն ամբողջութիւնը՝ բանասերներու ուշադրու-

քեան եւ ուսումնասիրութեան արժանի գլուխ մը պիտի կազմէ :

Երկու ծանօթ աշխատակիցներ , Մեքսէս եւ Հարմակ , կը վերեւնան Մայսիսի ներկայ քիւին մեջ , մեկը՝ Աղեքսանդր Տիւմայի նուիրուած գրական ուսումնասիրութեամբ մը , եւ միւսը՝ օրուան Տօնին առթիւ՝ Ս. Սանակայ եւ Ս. Մեսրոպայ վրայ խօսողներհուն յօդուածով մը , որոնք տարակոյս չունինք քե հաւատարմանդով պիտի կարդացուին : Նոյնպէս , ծանօթ բանասէր Յովն. Գազանեան՝ Գրախօսականով մը , նոյնքան անաչառօրէն գրուած որքան ձեռնհասօրէն :

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

— օգոստոս —

ՅՈՒՔՅԵՐ. — Հեղ. Սիպիլ. — Հրատ. Նեան-Պապիկեան Գրատուն. — Տպագր. Յ. Մասքէոսեան, Կ. Պօլիս , 1902

Աշխարհագրութեան աղւոր դասագիրքէ(*) մը ետք՝ այս երկրորդ հրատարակութիւնն է Նշան-Պապիկեան Գրատան , եւ կողքին վրայ կը կրէ «Նշան-Պապիկեան մատենադարան» վերադասութիւնը , ինչ որ ենթադրել կուտայ թէ գեռ ուրիշ հրատարակութիւններու շարք մը պիտի յաջորդէ այս երկուքին : Եւ ստուգիլ՝ Նշան-Պապիկեան Գրատունը , զոր կը վարեն երկու համակրելի եւ զրատէր երիտասարդներ , մեր գրավաճառներուն հասարակ ու սովորական դարձած ըմբռնումէն շատ արբեր ու լաւագոյն տեսակէտով մը կըմբռնէ իր գործը եւ միայն խոշոր շահերով գիրք ծախելու կամ շատ շատ՝ դասագիրք տպելու առաջադրութեամբ չէ որ գործի ձեռնարկած է , այլ եւ հրատարակչական բազմակողմանի ծրագիր մըն ալ գծած է իրեն համեստ սահմանի մը մէջ , ինչ որ կենթադրէ ընել կանխիկ զոհողութիւններ ինչքան հայ գրականութեան նպաստելու . բաղձանքով նոյնքան ալ ի հարկէ տպագրայ շահու մը յոյ-

(*) «Միջին դարն՝ աղբ աշխարհագրութեան» Հրատ. Ս. Խանճեան , տպագր. Մատթէոսեան , 1902 :

սով որուն իրականացումը սակայն , մասնաւոր գրական երկերու համար , չի կրնար ապահովուած նկատուիլ մեր հասարակութեան մէջ որ իր գրասիրութեամբ չէ որ կը փայլէ : Ասոր հետ մէկտեղ Նշան-Պապիկեան Գրատան վարիչներուն իրենց գործին մարդն ըլլալը եւ ցոյց տուած գրական ճաշակը մեզ կ'ապահովեն թէ պիտի կրնան իրենց հրատարակութիւնները ընտրել գիտնալ — որուն ապացոյցը արդէն իսկ կընծայեն իրենց առաջին հրատարակութիւնները — որով հասարակութեան քաջակերանքին ալ ուշ կամ կանուխ պիտի արժանանան :

Այսչափ մը աւելորդ չհամարելով հասարակութեան ծանօթացնելու համար այս նոր հաստատութիւնը որ տոգորուած է ամէն բնարամագրութիւններով ի հաշիւ գրականութեան , անցինք խօսիլ Յոյներուն վրայ Համակրելի գրագիտութիւն — Սիպիլի — ոտանաւորներու այս հաւաքածոն իրեն որ ժանի գեղարուեստական շքեղ տպագրութեամբ մը իւրոյս ընծայուած է , Սիպիլի գրագիրուն կողք մը որուն կը յաջորդէ նոյնքան սիրուն էջեր՝ Իւրաքանչիւր ոտանաւորի սկիզբը կամ վերջը ունենալով նոր ոճով գրագրականներ , եւ այս ամէնքը որոնք փայլուն եւ խիստ ընտիր թուով մը վրայ կազմած են չիք եւ գոյարիկ հատորիկ մը որ կարծես կենջակած չնոր՝ մը կը ցոլացէ : Երկնցներու համար թէ կին բանաստեղծի մը գործն է այն , եւ որ ամէն կերպով վարժմանը Եւրոպական նմանօրինակ տպագրութիւններէն : Յատկապէս կը շեշտեմ այս պարագաները որովհետեւ այս տեսակ մագրութիւն մը հաճելի նորութիւն մըն է մեր մէջ ուր լրագրիւններն ու գիրքերը սովորութիւն եղած է թուովներու ամէնէն վերջնոցին ու չորձուկին վրայ տպել , թող տպագրութեան անխնայութիւնը :

Յոյները կը պարունակէ 27 ոտանաւոր որոնց մէկ մասն անախալ . թիւ մը որ շատ քիչ է եւ ենթադրել կուտայ թէ Սիպիլի բնու իր ոտանաւորներուն մէկ մասը մէկ թողուցած է : Այս ոտանաւորները կը կրեն 1885 թուականէն սկսեալ մինչեւ ներկայ 1902 թուականը . ըսել է թէ 17 տարուան շրջանի

մէջ գրուած են : Այսքան երկար տեւողութեան մը միջոցին բնական է որ մարդ չի կրնար իր ոճը անփոփոխ միօրինակութեան մէջ պահել , եւ ստուգիլ՝ կարելի է գիտել որ Սիպիլի ոճը ժամանակին հետ կը փոխուի քիչ շատ եւ կը յարմարի օրուան դրական ուղղութեան , ու քանի մը ոտանաւորներ ալ , ինչպէս Երկինքը , Լուսինը , թէեւ լեզուի կողմէն բարեփոխուած , բայց կը մասնեն վերապէս երբեմնի գրաբարեան գրիչը , գլուխը ըլլալով աշխարհի ժամանակ մը ուր «իմաստութիւն» կոչուած գրագիտական ձեւը զետեւ տեսնուի ինկած չէր , ինչ որ սակայն թեւաւորին մը չէ որ պիտի համարէի այդ կտորներուն որ համակ զգացմամբ ու բանաստեղծութեամբ կը գեղուն :

Յոյժեղուն մէջ խմաստասիրութիւն կամ դադարար շատ մի՛ փնտռէք : Հոն բնութիւնը եւ մարդկային զգացումներն են որ կերպուին գերազանցապէս կանացի զգայնիկ փափկութեամբ մը որ յատուկ է Սիպիլի գլուխին : Բնութեան բոլոր մեծ ու պզտիկ երեւոյթները՝ անձնաւորուած , զգայնացած , կը ծառային հոն թարգմանելու , արտայայտելու հոգեւոր մտնէն նուրբ զգացումներն ու կիրքերը , եւ անոնց հետ խառնուած՝ կարծես կը ձեւացնեն գերզգայնիկ , իրարու համակիր ամբողջութիւն մը որ կը սարսուռայ միեւնոյն լուսնով տողերուն մէկ ծայրէն միւսը : Ու այդ տողերը կարկաչանոս վտակի մը պէս իրարու ետեւէ կը հոսին , անձիգ ու հեղափոխ , օրորի մը անուշ երազանքը ազդելով քնի մէջ չես գտնիր ո՛չ մէկ տգեղ , աշխարհաւոր , խժաւուր բառ որ աւանջդ վիրաւորէ եւ սթափեցնէ քեզի այդ անուշ երազանքէն , միջոցաւ միւս կողմէ՝ ճօն , աղւոր յանգիստողներուն հաճելի ու ներդաշնակ երաժշտականութիւնը անվթար կը պահեն սիրտը մինչեւ վերջը :

Այս ընդհանուր ազգաւորութիւնէս վերջը՝ կուգին ըսել թէ այդ ոտանաւորներու շարքին մէջ Խուկը , Օրորումները , Յուշերը , Անցնելու մօտը , Սիրոյ ցնորփները , Առուակը , Իրեւնիկը մանաւանդ ամէնէն աւելի յաւիտեան են ըստ իս . Իսեպիլին մէջ կան

գեղեցկութիւններ զօր սակայն եւ չհասկցայ : Երկայն ոտանաւորներուն մէջ որոնք միշտ քիչ մը դժուար կը կարդացուին , Սօսին տակը յուզիչ աւանդալէպ մըն է , բայց չեմ գիտեր թէ հեղինակը աւանդութիւնէ՞ մը քաղած է այդ նիւթը , թէ չէ իր յղացումն է : Արեւու ճառագայթքը թէեւ շատ գեղեցիկ , բայց նիւթը քիչ մը աղայական գտայ :

Տաղաչափութեան գալով՝ ինչպէս կերելի , Սիպիլ գործածած է ոտանաւորի շատ մը ձեւեր ու չափեր , բայց որովհետեւ այդ երանելի արուեստին շատ խելքս չի հասնիր — թէեւ ես ինքս ալ ոտանաւորներ մտած ըլլամ — ուստի այդ մասին կարծիք չպիտի յայտնեմ . միայն սա չափը պիտի կրնամ ըսել թէ տաղաչափութեան հասարակ կանոններուն դէմ ոչ մէկ մեղանչումի կարելի չէ հանդիս պիլ Յոյժեղուն մէջ :

Իսկ գալով լեզուին՝ Սիպիլ մեծ խնամք տարած է միօրինակ ու կանոնաւոր աշխարհաբար մը գրելու ծայրէ ծայր , համաձայն այն կանոններուն՝ զորս պարզած է իր պատրաստած Քերականութեան մէջ : Հազեւ թէ տեղ տեղ քանի մը անհարթութիւններ կը նշմարուին , արդիւնք անուշադրութեան կամ յանգիստ յարմարցնելու հարկին . զորօրինակ՝ «ծովը իրեն գոյն , երկինք իր շողն էր դրած» . (էջ 33) . պէտք է որ ըլլայ «ծովը իր գոյնը . . . » որովհետեւ իրեն տրական հալով է . — «արծաթի» (էջ 9 եւ 74) . պէտք է որ ըլլայ «արծաթէ» (=արծաթեայ) . — «կը հոսէ» (էջ 57) . «կը ծխի» (էջ 23) , «կը ծաթի» (էջ 74) , պէտք է որ ըլլան «կը հոսի , կը ծխայ , կը ծաթէ» կամ աւելի ճիշտը՝ «կը ցաթէ» . — «Մտածել սարսուռին . . . » (էջ 70) , «մտածել չոր փունջի մը» (էջ 90) , պէտք է աւելցնել «վրայ» , այսինքն՝ «մտածել սարսուռին վրայ , չոր փունջին վրայ» եւ այլն :

Փափագելի էր որ այս ոտանաւորներու հատորէն ետքը՝ նորալէպներու հատոր մը հրատարակէր Ն. Պապիկեան գրատունը :

ՅՈՒՆ. ԳԱԶԱՆԺԱՆ

ՇՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

ՎՃԱՐՕՐԸ

Վ. Է. ԱՊ. ԲՕԼ. ՊՈՒՐԺԻԷ

Թիւ 8

— Շիտակն ալ տա է, պատասխանեցի, խեղճ մայրդ իրաւունք ունէր երբոր կըսէր քեզ թէ դուն պատասխանատու չես՝ հօրդ ու մօրդ քեզ համար քրածնունդ հաւատա՛, քու պարտականութիւնդ շատ պարզ է, եւ դուն զանիկա գտած ես անմիջապէս՝ մտիկ ընելով սրտիդ, որ պատուիրած է քեզ մեղքնալ մայրդ, խնայել հօրդ ծերութեան մահացու վիշտ մը, եւ բարիք ընել ֆօպուս-Սէն-ժաքի դժբախտին : Դուն նախ պարտիր իրեն գարձնել ստակը որ իրն է, յետոյ օգնել անոր ինքզինքը փրկելու սոսկալի գերութեանէն, բժշկուելու ալ քրտամուլութենէ ուր ընկելու վրայ է, ուր, ապահով եղիւր, ամէն պարագայի մէջ ընկղմած պիտի ըլլար՝ հարուստ թէ աղքատ : Եւ եթէ զինքը բուժես, պարտքէ ազատած պիտի ըլլաք, պատուոյս վրայ կ'երաշխաւորեմ . . . :

— Ոչ, յարեց ան, առջին նայելով նայուածքով մը ուր ես դարձեալ գտայ հոգեկան կեանքի այն սքանչելի եռանդը որ զիս մէկէնիմէկ իր բարեկամը ըրած էր՝ Լիւքսան-պուսի պարտէզին մէջ մեր առաջին հանդիպմանը, ո՛չ, պնդեց, առիկա բաւական չէ : Եւ իբր թէ, ներքին գաղանի հաղորդումով մը, հանդիսաւոր խոստովանութեան մը այդ վայրկենին, միեւնոյն յիշատակը վերերեւցած ըլլար մեր երկուքնուս . « Կը յիշե՞ս, շարունակեց, երբ քուէմէն յետոյ զիրար վերադարձանք, մեր գաղափարներու խօսակցութիւնները, եւ այն պատճառները որոնք ինծի սկսիլ տուին բժշկական ուսումնուր : Կ'ըսէի քեզ թէ ծարաւն ու նօթութիւնը սննդի ստուգութեան : Կարծած էի այդ ստուգութիւնը գտած ըլլալ Բասքալի ձեռով տեսակ մը դրաւի մէջ : Կը յիշե՞ս նաեւ թէ կ'երազէի

կեանքի կիրառութիւն մը՝ արդարանալի երկու վարկածներուն մէջ ալ, հանդերձեալ կեանք մը կամ անէութիւնը . . . Արդ, այնպիսի բոլոր հասած եմ որ այս կրկին վարկածը ալ հաւատարմ չէ : Երկրորդ կացութեան մը մէջ ինչ կամ եմ : Դուն ես արուելիք ստակի, արուելիք խնամքներու վրայ կը խօսես ինծի : Բայց երբ այդ Ռուպէսին վճարեմ գումարը քսան անգամը, երեսուն անգամը, հարիւր անգամը, երբ զինքը ազատեմ անդի մօտութենէն, ի՞նչ միջոցով իրեն ես դարձնուիլ երիտասարդութիւնը, ամէն հնարաւորութիւն կորսուած ըլլալով, ի՞նչպէս դարձանում ան դարձանելին : Եթէ մարդկային գործնականութիւնը ասկէց աւարելի հորիզոն մը ունենար, այդ դժբաղդ մարդուն հանգիստ կրնայի ինքզինքս փրկել . . . Այսօրունքէ վեր որ այս գաղափարները կը պաշարեն միտքս : Յորմէ հետէ հիւանդանոցներու մէջ տեսող քոյրեր որ հիւանդներու սպասարկութիւն կ'ընէին, իբրեւ զօրավիւր սա գաղափարը անհնաւով թէ ուրիշներու միջոցաւ հոգիին կը փրկէին, շատ մտածեցի այն բանին վրայ զոր քրիստոնեաները փոխանցակալութիւն կ'անուանեն : Միակ խնդիրը գիտնալն է թէ փորձը բնութեան մէջ մեզ ցոյց կուտայ թէ ոչ այս երեւոյթը . . . Տարիներէ ի վեր անխիտ ինծի կ'երեւնար իբրեւ միակ բացարձակութիւնը աշխարհի բաներու, եւ անհնարին է որ այլապէս կարենաս բացատրել զժողովորձը որ զիս կը ճնշէ : Այս՝ կամ ոչ : Ծնողացս յանցանքին համար պատճառաւոր եմ : Եւ այդ Ռուպէսն իսկ ինչի՞ զոհ է, եթէ ոչ իր հօրը յանցանքին : Այս տեսակ բացարձակութիւնը տեսնալէս յետոյ, հարկ է որ անոնց ետին բաշխիչ զօրութիւն մը գտնուի : Եթէ

կայ չարին փոխանցակամութիւնը , ըստ իր
փոխանցակամութիւն մըն ալ ըլլալու է . . .
Ասանք իմաստասիրական տեսութիւններ չեն ,
այլ փորձառութիւն է : Եւ փորձառութիւն է
նաեւ այն անխուսափելի արդարութիւնը ,
որուն սոսկումովը ապրեր է խեղճ մայրս
տարի , եւ որ՝ ինչպէս ինք ըսաւ
պատահաբար է զինքը իմ միջոցովս : Արդա-
րութեան ետին դատաւոր մը անհրաժեշտ է :
Վճարորին ետեւը՝ անհրաժեշտ է պարտապա-
հանք մը . . .

— Ասկէ ի՞նչ կեդրակացնես , կը հարցնէի
իրեն երբ կը լսէր :

— Կ'եղբարացնեմ որ՝ եթէ Աստուած գո-
րթիւն չունի , չեմ կրնար աւանդը ետ դառ-
նել : Կրնամ՝ եթէ գոյութիւն ունի . . . Ա՛հ ,
եթէ կորսնալի հաւատալ անոր , աւելցուց
հաւաքանքով մը զոր կը լսեմ դեռ տասնը-
փոյ տարի ետքը :

Յ.

Այո՛ . . . ասանքովեց տարի է յորմէ հետէ էօ-
թէն — պատմած դէպքերուս անմիջական աղ-
ղեղութեանը տակ — այս խօսքերը կուզէի
ի՞նձ , որոնց արամարանութեանը ըսելիք չու-
նիմ , եւ այդ տասնըփոյ տարիներէն ի վեր ,
ներքին ուրիշ ի՞նչ փոթորիկներու մէջէ՛ն յա-
կտ ինձի անծանօթ , անիրա հասաւ այս խօ-
սակցութեան մէջ ինձի ցոյց տուած լուծու-
մէն , որուն այնքան խառնաւառօրէն կը զճար՝
առանց իր բանականութիւնը բողբոլին
անձնատուր ըլլալու իր մէջ պոռպոյզ սրտի
պատճառարանութեանց : Կը կրկնեմ ինչ որ
կ'ընէի սկսած ատենս , թէ եւ հոս պարզ
վրայ մըն եմ , որ գնահատում չընեմ : Էօթէն
այսօր ոչ հայրը ունի ոչ մայրը : Երկուքն ալ
մեռած են . . . մայրը , վերջապէս անգործացած
զակէին ներումէն . . . հայրը , երբեք չկասկածե-
լով թէ այդ սրղին գիտէր ամէն բան : Բիէն
նոսրէն ալ մեռած է , թէ եւ Քոստայէն կա-
ռաւորէն մաքառած ըլլար հիւանդութեանը
դէմ , եւ ինքն ալ , — արհեստակիցները տե-
սան ապուրթեամբ մը զոր տարիները չեն
ցրուած — իրարու ետեւէ վրայ հասնող այս
երեք մահերէն քիչ ժամանակ ետքը , յեղա-
կոծութեն , կը թողուր հիւանդանոցներու

բժիշկի իր նախանձելի պաշտօնը , իր Բարիգ-
եան փառաւոր յաճախորդները , ստուգու-
թիւնը ամէն պատիւներու , մահելու համար
Սէն-Ժան ար Տիէօի ֆոնէններու միաբանու-
թեան մէջ , որ , ինչպէս յայտնի է , նուիր-
ուած է հիւանդներու դարմանման : Այս որո-
շումը տուած միջոցին հետեւ էի Բարիգէն ,
եւ կը հասկնաք անշուշտ որ երբեք չհամար-
ձակեցայ հարցափորձել զինքը : Սակայն
չգաղթեցանք զիրար տեսնելէ , եւ երբ դէպ
հարաւ ճամբորդութիւն մը զիպուածով զիս
Մարտիլիա տանի , ուր յիշեալ կրօնաւորները
կարեւոր հաստատութիւն մը ունին , անպատ-
ճառ կ'այցելեմ իրենց հիւանդանոցը , եւ խօ-
սարան կը կանչեմ հայր Սէն-Ռօպէտը : Հի-
ւանդապահի սեւ խորդին տակ , կը դանեմ
վերասին փիլիսոփայութեան նախկին ընկերս ,
եւրոպական համբաւի մը սահմանուած եր-
բեմին գիտունը , աղան երկու խեղճ մոլոր-
եալներու զորս հայրական սէրը ոճիւրի մղեց :
Եւ , ամէն մէկ այցիս , զանիկա կը գտնեմ
աւելի հանդարտ , աւելի լուսաւորուած այն
ստուգութեամբը զոր այնքան փնտռած է ,
աւելի ազատ արտայայտութեամբ մը իր աչ-
քերուն մէջ , որոնք այնչափ երիտասարդ կը
մնան : Ու եւ երկու բան կը հասկնամ , նախ
թէ անիկա այսօր կատարեալ , բացարձակ
հաւատքի մը տէր է , յետոյ թէ ամէնուն
իրը ընելով իր գիտութիւնը , — հարստու-
թիւն մը զոր կը շռայլէ , վասնզի զայն իր-
բւեւ իրը չի նկատեր , — երեւան հանած է
թերեւս միակ միջոցը լուծելու ամէնէն ցա-
ւաղին հալցը ուր երբեք տեսած ըլլամ մար-
դու մը մոլորիլը , եւ կը դարձնէ իր աւանդը
զոր եղծած են իր ծնողքը . եւ որովհետեւ իր
սեւ հանդերձին տակ իսկ , դասական յիշա-
տակներու սիրահար մնացած է , երբեմն ինձի
սուաջ կը բերէ , — աս պիտի ըլլար իր միակ
մարդասիրութիւնը , եթէ անոր պէս ուրիշ
չիկար — խօսքը փիւնիկէջի այն վաճառա-
կանին որ փոթորիկով մը Ատաիկէի ծովեւ
զերքը ինչալով՝ փիլիսոփայի մը հանդիպե-
ցաւ հոն . . .

— Նաւահանդիսաւ հասած ատենս միայն
ընկղմեցայ . . .

Երբեք չկրցայ հասկնալ թէ իմ սերունդիս
մարդոցը մէջ ասիկա այն մարդն էր զոր ա-
մէնէն աւելի կը մեղքնա՞յր կամ որուն վրայ
ամէնէն աւելի կը նախանձէի :

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Բ. կարգի Մէճի-տիյէ պատուանշան շնորհել Տպագրական Տեսչութեան օգնականներէն Քեամիլ ու Վէհպի պէյերու, տպարաններու քննիչներէն Շէմ-սէտաին պէյի, նոյն Տեսչութեան առաջին քարտուղար Ֆայիզ պէյի ու առաջին միւսմէ-յիզ Վէլէտ պէյի, եւ Գ. կարգի Օսմանիյէ նոյն Տեսչութեան պաշտօնեաներէն Սամիհ պէյի, ի վարձատրութիւն իրենց բարւոք եւ գովելի պաշտօնավարութեան: Կը շնորհաւորենք Տպագրական Տեսչութեան սոյն արժա-նաւոր ու ձեռննաս պաշտօնատարները՝ Կայ-սերական բարձր զննատման արժանացած ըլլալուն համար:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՔՐՈՆԻԿ

—>=<—

Հարսնիքներու այս եղանակին մէջ ի՞նչ պեղեցիկ նորութիւն մը ու այժմէութիւն մը ունէր օրաթերթերու Կովկասեան Թղթակցու-թեան մէկ լուրը, — թէ Պարսկաստանի Երես-տարդ գործարանատէր մը, Պ. Կ. Աւետեան, որ Ռուսիոյ Եկատէրինօստար քաղաքը կը գտնուի, Արմաւիրցի հայ օրիորդի մը հետ ամուսնանալուն առթիւ՝ իրր հաշտանեկան նուէր . . . աղջկանց վարժարան մը կը հիմնէ թէհրանի մէջ, 25,000 լուսլի ծախքով: Իր-զութիւնը ինքնին այնքան եզակի է ու պերճախօս, որ խորհրդածութեան պէտք չի թողուր: Արդէն, միակ խորհրդածութիւնը՝ սովորական դարձած յանկերգին կրկնութիւնը պիտի ըլլար, — օրինակը մերիններուն աշ-քին պարզօղ ու անոր հետեւելու հրաւիրող: Ի՞նչ հարէ սակայն, երբ ապահով ենք զըժ-բաղբաբար որ եթէ հատոր մըն ալ գրուէր այս նիւթին վրայ, մեր հարուստ երիտա-սարքներէն ո՞չ մէկուն միաքէն պիտի անց-նէր՝ իր ամուսնութեան առթիւ մինչեւ իսկ դպրոցի մը գրասեղանները չինել կամ եկեղե-ցիի մը վարագոյրը նորոգել. մեծ բան է ար-դէն, մեր համայնքին եսասէր բարքերուն

համար, որ Հիւանդանոցի յատկացուած ին-խան ծաղիկապսակի նուիրատուութիւնը մ-մոռցուիր, թէեւ շատ ցանցաւ կերպով, ե-կերպին ալ պատասպաններուն սեղանը տրուի փեսային կամ հարսին կողմէ:

§ Հիւանդանոց եւ հարսնիք. ի՞նչ նախ-պատկեր տրտմութեան եւ ուրախութեան ու ճիշդ ասոր համար է որ վերջինին մի-ցին առաջինը յիշելը սրտի կազդուրում ե-հոգեկան զուարթութիւն մը կը պատճառ-Շարժուման հարսնիքներուն մէջ, ամէ-նէն ինքնատիպը, Հիւանդանոցի մատու-մէջ կատարուածն էր, անչուք պատ-դրութիւն մը, որ մամուլի հին աշխա-ւորներուն համար մասնաւորապէս մտե-կան հանգամանք մը ունենալու էր՝ Մամու-հանգուցեալ արտօնաբերօյ որդւոյն պատ-դրութիւնը ըլլալուն: Հրաւիրակիրն ի-աւանդական ոսկեզօծ տառերով տպուած, ի-պարզուկ ձեւովը ու ոճովը, սրտի դա-բան մը ունէր կարծես:

Պատիւ ունինք ծանուցանել Ձեզ զամուսնութեան մը եղբորորդւոյն՝ ԱՐՄԵՆԱԿ Գ. ԱՅՎԱԶԵԱՆԻ ընդ ՕՐ. Ք. ԳՈՒՀԻ Պ. ԹՕՂԱՅԺԱՆԻ, խնդրելով որ Ձեր եւ Ձեր ա-նիւ ընտանեաց ներկայութեամբ բարեհաճիք ներկայ դ-նուիլ Պատկադրութեան հանդէսին որ պիտի կատար-յալուի յատկապէս երկուշաբթի, 1/14 յուլիս, ի ժամ 7, Ս. Քրի-ստոսի Ազգ. Հիւանդանոցի մատարան մէջ:

ԱՐՄԱՀԱՄ Յ. ԱՅՎԱԶԱՆ

Ժողովրդական հարսնիք մըն էր, աս-հովապէս, կատարուածը, առանց եթիթի-առանց բնաղբաբի քաղաքավարական ձե-րու եւ անկեղծ խնդակցութեամբ մը որոն-մասնակցեր են Հիւանդանոցի որդւոյն ի-ալ ներկայ գտնուելով պատիւ խորհրդի:

Եւ անա, յաջորդ օրը, լրագրական հա-հաւորութիւններուն կը խառնուի դատ-թեանց տարափ մը, թէ ինչո՞ւ Փոխադր-բանը՝ իր նշանախօսութեանց տախակ ցու-ցակին մէջ՝ «աղա» մակդիրը տուած էր հա-զուցեալ հրապարակագիրի մը որդւոյն, զի-անձատելով՝ 100 կամ 50 դր. խաչագին վնա-րողներուն մէջ չի գտնուելուն համար: Եր-գիտողութիւնները բոլորովին արդար են եւ կ'արժէ անոնց վրայ աւելցնել սա տեսակէտ-ալ թէ մեռած խմբագրի մը գաւիկն — որ,

ինքն ալ, Հիւանդանոցի պաշտօնեայ է —
հաճախօտութեան ձրի կատարուելը շնորհք
մը չէ որ կըլլուի Փոխանորդարանին կողմէ,
այլ բարոյական պարտականութեան մը կա-
տարումը: 100 զրշ. աւելի՝ 100 զրշ. պակաս,
սի խախտիր Կեդրոնական Մատուկին ելմա-
տայը. մինչդեռ Արմենակ էֆ. Գ. Այվազ-
եանին եղած անարգանքը, նշանախօսութեան
ցանկին տակը նետելով իր անունը ու ձրի
մին ալ կոչնդելով անոր, ողորմութիւն մը
տրուած ըլլալու ձեւով, կը խախտէ այն մե-
ծարանքը զոր պարտաւոր ենք ունենալու
Պատրիարքարանի հոգեւոր եւ հայրական հե-
ղինկութեանը հանդէպ:

Երանի՝ թէ գէթ այս անդամուան քննա-
դատութիւնները զօրէին՝ քիչ մը ճաշակ ներ-
մուծել եւ նուազ «գրամ հոտող» հանգա-
ման մը տալ նշանախօսութեանց ցուցակ-
ներուն պատրաստութեան ու խմբադրու-
թեան:

Տ. Մամուլի հին աշխատասերներուն համար
թէ իր նշանակութիւնը ունէր իրենց հին
ու մեծած մէկ պաշտօնակցին ամուսնու-
թիւնը, նոր հրապարակագիրներուն համար
աւելի՝ նշանակելի է ամուսնութիւնը հա-
մալիւի երիտասարդի մը, — amateur գրա-
դէտ մը, — որ բաւական տարիէ ի վեր իր
տեղը ունի Պոլսահայ մամուլին մէջ: Գու-
շակցիք թերեւս որ «Տօմինօ»ին կ'ակնար-
կէմ, — Ռօտօլֆ էֆ. Սամիկեանին, — որուն
անձնութիւնը՝ Օր. Արաքսի Գամպէրի հետ
կատարուեցաւ երկուշարթի, Բերայի Ս.
Երրորդութիւն եկեղեցին, կնքահայրութեամբ
Երբզոր Խան Շամաւանճեանի, Բոչորովին
աներմական հանգամանք մը ունէր այս հարս-
նիքը եւ երկու կողմի ազգականներ միայն
ներկայ էին: Մեր ջերմագին շնորհաւորու-
թիւնները կ'ուղղենք մեր բարեկամին ու աշ-
խատակցին եւ Տիկին Արաքսի Ռ. Սամիկ-
եանի:

ՊՐԻՍԱՅԻ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Պոլսայի մէջ գործակալ չունենալով այս
առիթ, կը խնդրենք այդ քաղաքի մեր այն
բաժանորդներէն որոնք տակաւին չեն վճա-
րած իրենց բաժանորդագինը, որ հաճին ուղ-
ղակի զրկել Մասխիս խմբագրութեան, ման-
աւորութիւն կամ նամակադրուածով:

ԼՈՒՍՆԱԿԻՆ

Հին բարեկամ, ի զո՛ւր ինծի դուն դարձեալ
Փայտի կ'ուզես վարագոյրիս հիւսուածքն,
Կամ ծառերուս սերեւներուն բացուածքն.
Ի զո՛ւր, ժողերդ առջի փայլը չունին ա՛լ:

Երբ երկնին խորութեան մէջ անյասակ
Քու շրջանդ կը բոլորես դարաւոր,
Աղուո՛ր լուսնակ, զիս չես մոռնար, կուզես որ
Սիրքս խայտայ դարձեալ արծաթ շողիդ սակ:

Պաշրեանիս առջեւ ժող'ւր երբ խոկամ,
Կամ պարեհիս մէջ քափառիմ վշահար,
Զիս սփոփել, գգուել կուզես, բարեկամ,

Ու կը փայլիս նուրբ ամպիկի մը տակէն:
Ի զո՛ւր սակայն, ա՛լ եեզ սիրել չեմ կրնար,
Երբ հեռու եմ իմ հոգիիս լուսնակէն:

Վ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պաշրիարֆ Հայր կիրակի առաւօտ
պատարագեց Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկե-
ղեցին, որուն տօնախմբութիւնն էր, եւ քա-
րոզեց Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքին ու
գործունէութեան վրայ զոր արդէն առարկայ
ըրած է մանրակրկիտ ուսումնասիրութեան մը:

Կրօնական գործոց տեսուչ Զիվէր պէյ,
կիրակի օրը Ղալաթիոյ եկեղեցիին խորհրդա-
րանը երթալով, տեսակցութիւն մը ունեցաւ
Ս. Պատրիարքին հետ:

Պաշրիարֆաւանի առաջին գործակատար
Տիգրան էֆ. Տ. Ներսէսեան երեքշարթի ա-
ռաւօտ Կայս. Պալատ գնաց:

Ս. Պաշրիարֆ Հայր որ երկուշարթիէն ի
վեր իր ընտկարանը կը մնար անձնական
տկարութեան պատճառով, հինգշարթի առա-
ւօտ Ղալաթիոյ եկեղեցին երթալով՝ Ս. Թարգ-
մանչաց տօնին առթիւ հայ տառերու դիւանին
վրայ գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ: Յետոյ,
Պատրիարքարան գնաց:

Դուրեան Սրբազան, Դպրեվանքի վերա-
տեսուչը, ամառնային արձակուրդի առթիւ
մայրաքաղաքս պիտի դայ մօտ օրէն:

Էջմիածնէն կը հաղորդուի թէ Օշականի ամբարնոցին մէջ Ս. Հայրապետին բնակութեան յատկացուած սենեակը չափաբորժնէր՝ մանկով՝ գտածնին գոցեր են ։ Քննութիւն կը կատարուի , բայց փոքրը երեւան հլած չեն տակաւին ։

Պերպերեան վարժարանի ամսվերջի քըն-
նութիւնները աւարտեցան անցեալ կիրակի ,
դպրոցական պարզ հանդէսով մը , որու միջ-
ջային՝ չըջանաւորտ կարգէն իրենց աւար-
տական ճառերն արտասանեցին Պ. Պ. Յ.
Սեթեան , Ե. Օտապաշեան , Ն. Գաղաղեան ,
Պարոյր Բ. Քէչեան ։ Վկայականներու բնաշ-
խումը պիտի կատարուի ուրիշ օր մը , որ
յառկապէս պիտի ծանուցուի ։ Վարժարանին
նորոգութիւնները առաջ կը տարուին , այն-
պէս որ արձակուրդէն վերջ դպրոցական նոր
չըջանին ամէն բան պատրաստ պիտի ըլլայ՝
ըստ սովորութեան կանոնաւորապէս սկսելու
համար նոր չըմանք ։

Մտֆի եւ գրչի երկու անխոնջ ու արդիւնաւոր մշակներ, Ռէթէոս էֆ. Պէրպէրեան եւ Բելզանդ էֆ. Քէչեան, զէմ առ զէմ կը գրտնուէին կիրակի օրը, այս կրթական հանդէսին մէջ, մէկը՝ շնորհաւորելով Բիւզանդիոնի Տնօրէնը իր որդւոյն յաշնդութեանը համար, իրրեւ շրջանաւարտ, եւ միւսը՝ շնորհաւորելով Պէրպէրեան վարժարանի Տնօրէնը՝ ներկայ դպրոցական շրջանն ալ յաջողապէս բուրլած ըլլալուն համար։ Մասիսի խմբագրութիւնն ալ իր խնդակցութիւնները կ'ուզէ այս կրկնապէս հաճելի առիթով իր յարգելի աշխատակցին ու յարգելի պաշտօնակցին, ինքնօգնութեամբ յառաջացած դաստիարակ-գրապէտի եւ հրապարակադրի երկու տիւպարներ, նոյնքան ծանօթ հանրային կեանքի մէջ՝ իրենց յարատեւութեան ոգիով ու աշխատասիրութեամբը, որքան անհատական կեանքի մէջ՝ իբրեւ ընտանիքի հայր եւ իրենց զաւկներուն դաստիարակութեանը հոգածու։

Ինչպէս յիշատակած ենք վերև, Պէր-
պէրեան վարժարանի այս տարւոան շրջանա-
ւարաներուն մէջ փայլուն տեղ մը կը գրաւէ
Պ. Պարոյր Բ. Բէչեան, Բիրյանդիյունի Տնո-
ւէնին որդին, որուն աւարտական ճառին

նիւթն էր «Մարդկային արժանապատե-
թիւն» եւ որ՝ լեզուներու ճիւղին քննութեան
պահուն՝ կարողաց պարսկերէն գրած մը
երկուքն ալ լաւ շարադրուած ու արտաւա-
ռած ։ Պ. Պարոյր իր նախնական ուսու-
նաւորած է Կարնոյ Սանասարեան վարժա-
րանը ուրիշ վերադարձին մտած է Պէքա-
եան վարժարան ։

Կիլիկիոյ Կաթողիկ. Տեղապահ Տ. Կիր-
կոս եպիսկ. կրկին նամակ մը գրելով
Պատրիարքին , խնդրած է որ վաւթալով
Կաթողիկոսի ընտրութիւնը՝ վերջ արեւել
համար թեմական անկեղծարան վիճակին

Աւստրիական կառավարութիւնը մէկ միջոցն ֆիօրին առաջարկեւր է . կըսուի , վիենայի Միիթարեան միաբանութեան՝ զննչահամար Միիթարեանց վանքը , զոր կողովմիտցնել զրացի զինուորական հաստատութեան . իսկ Միաբանութիւնը երեք միլիոն ֆիօրին կը պահանջէ :

Մանգոլուէի Էմֆեար օրաթերթը, յառաջիկայ երկուշաբթիէն սկսեալ, Պոստալ տանեկան կեսնքէ վէպ մը հրատարակելիս սկսի, իբր թերթօն Կարող ու ծանօթ դրչի մը հեղինակութիւնը եզոյ այս հարկէ պիտի անուանն է «Հօրեցաւար» :

ՀԱՅՈՒՆԵԱՅ ԿԱՐԺԱՐԱՆ
ԱՏԱԲԱՅԱՐ

Վարժարանիս նոր տարեշմար ավարտ
սկսի Սեպտ. 10 (Ն. Տ.) Դշ. Գիշերօթիկներ
տարեթույակն է 12 Օւմ. ոսկի, որուն կէ
պէտք է վճարել Սեպտ.ի սկիզբը, եւ միւ
կէտը՝ Յունվարի մէջ, Դաշնակի դաս առնող
ները 3, իսկ երգեհանի դաս առնողները
Օւմ. ոսկի աւելի կը վճարեն :

Վարժարանին յայտագիրը՝ փակաբով
բուն ձրի կը զրկուի : Բանկցութեան
մար գրել առ Տոք. Ս. Գալաշնեան, Ան-
նապէս Խնամակալութեան, Աստագոր-
2-5

Արժույթի Կ. Ս. Ինֆորմացիոն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինանսերէս եօգուշու, Թիւ 27

“AU TALON D'OR,,

ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԱՐԻԶԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՈ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՅՈ ՇԽԱԿԱՐ

ԴԱՏԱՐԱՍՏԵՆԻ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաե կաղերու համար պատրաստուած

Կալարա, Վոյնոսա փողոց, բիւ 103

Ճաշկաւոր ու վերջին նորաձեւութեան
համաձայն կոշիկներու յանձնարարութեան հա-
մար,—մանաւանդ չափու վրայ շինուելիք,—
կարժէ անգամ մը այցելել սոյն վաճառա-
ւունք :

ՏԱՆԹԷԶԻ ՀՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ պատրաս-

տւեան մասնագէտ Պ. ՊԵՅԼԷՐԵԱՆ (Բերա,
Քէքէ, Պէյքըրի մաղաղային դէմ, Թ. 561)
պատիւ ունի ծանուցանել թէ իր վաճառա-
ւան մէջ կը ծախուին վերջին նորաձեւութեան
համաձայն ընտիր հովանոցներ, մասնաւորա-
պէս կանանց համար, որոնցմէ ամէնէն փափ-
կանալիներն իսկ գոհ պիտի մնան : Յանձ-
նարարութեամբ կը պատրաստէ թիւլով Փան-
թէզի հովանոցներ, յարեւմտան եւրոպական-
ներուն : Պատրաստ կը գտնուին նաեւ հար-
սանկան օժիտի յատուկ գեղեցիկ հովանոց-
ներ : Կը հրաւիրենք հայ ընտանիքները ան-
գամ մը այցելել այս վաճառատունը որ իր
անսակին մէջ առաջին է : Զափաւոր գիներ :
5—8

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈԼՈՑ, ԹԻՒ 200

Կալարա-Սերայի Լիսէին դէմ

Դ. Ե. Շք. օրերը առաւօտեան կանու-
խէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բ. Դ. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎԼՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾԱԾԵՑԵՐ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎԼՈՒՆԵՐԸ եւրոպական-
ներէն աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ ըլլալուն տա-
րակոյս չկայ, հետեւապէս աւելի ԱԺԱՆ
են :

Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՑ

ՊՐՈՒՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

լաւագոյնը ըլլալու համարը կը վայելեն 35
տարիէ ի վեր :

Դիմել

206-29, Եկեմի Զարօր, Մահմուտ Փաշա, Կ. Պոլիս



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ	34,775,642 Գրաւք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »
Կեդրոնաւոր, Դալարթիոյ ֆաբրիկն վրայ, Մահմաւան ճին տեղը	
Ընդհ. Բնակչ.	
Ա. ՀԻՒՐՄԻՒՋ	
Ընդհ. Գործակալ	
ԲԷՆՏՈՐ ՌԷԲԷՆ	

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Այս Բառարանին երկրորդ տպագրութենէն հաջորաւոր օրինակներու կարճ միջոցով մէջ վաճառուի մտնեն զօրաւոր ապացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս ֆրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալ հանգերձ պիտանի եւ օգտակար է աւհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ, թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ կաղմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աժանը կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր քաղթօնէ կաղմի 25 դր.

Գին ընթիւ լաթակաղմի 27 դր.

Կեդրոնացեղիմ է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Ֆիննամընլար եօգուու, Կ. Պոլիս

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԺԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շէտք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԺԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շէտք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ լուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եւրոպայի ընկերութեանց (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահեսպուրուն խան, Օսմ. Պանքային դիմացը Դորձակաւորինք Թուրքիոյ զխաւոր քաղաքաց մէջ